ՏԻԳՐԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
*ՀՀ ԳԱԱ ՀԱԻ*

# «ՎԱՐԴԱՆԱՆՑ ՆԱՀԱՏԱԿՆԵՐ» ԵՒ «ՎԱՐԴԱՆԱՆՑ ՍՐԲԱՎԱՅՐԵՐ». *ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ներածություն: *Պատմական Հայաստանի տարբեր շրջաններում գոյություն ունի չորս տասնյակից ավելի հուշարձան (սկսած պաշտվող ծառից մինչեւ վանքային համալիր), որ ավանդաբար կապվում է Վարդանանց պայքարի տարբեր դրվագների հետ։ Դրանց մի մասը ազատամարտի հերոսների շիրմատեղիներն են, որոնց վերաբերյալ պահպանվել են ժողովրդական ավանդություններ, իսկ որոշների դեպքում՝ նաեւ գրավոր տեղեկություններ։ Սրբավայրերի գերակշիռ մասը պատմաճարտարապետական հուշարձաններ են՝ անվանակոչված Ս. Վարդան, Վարդան Զորավար (կամ Զորավոր), Վարդանանք եւ այլ անվանաձեւերով[1]։ Սույն հոդվածում փորձ է արվում սահմանել «Վարդանանց սրբավայրեր» հասկացությունը եւ ներկայացնել դրանց ուսումնասիրության խնդիրները։*

ա) «Վարդանանց նահատակներ» հասկացությունը: *Հայ Առաքելական Եկեղեցին «Վարդանանց նահատակներ» կոչում է այն անձանց, որոնք իրենց կյանքը զոհաբերեցին 451 թ. Ավարայրի ճակատամարտում։ Նա սրբացրել է ռազմի դաշտում զոհված բոլոր՝ 1036 նահատակներին. «Եկեղեցին, այն օրէն սկսելով, հաւատոյ մարտիրոսներուն շարքը դասեց Աւարայրի 1036 նահատակները»[2]։ Մատենագրական տվյալների քննու-*

---

* *Ուսումնասիրությունը կատարվել է Հայագիտական հետազոտությունների ազգային ասոցիացիայի (ԱՄՆ) «Վարդանանց ասպետներ» հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվող «Վարդանանց սրբավայրերը Հայաստանում» թեմայի շրջանակներում։*

[1] Մ. ՀԱՍՐԱԹՅԱՆ, *Ս. Վարդանին եւ Վարդանանց նվիրված վանքերը եւ եկեղեցիները, «Ավարայրի խորհուրդը» գիտաժողովի նյութեր, Երեւան, 2003, էջ 146—149. առավել ամբողջական ցանկը տե՛ս* Ստ. ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ, *Հայոց պաշտամունքային վայրեր, Երեւան, 2009, էջ 389—392։*

[2] Մ. ՕՐՄԱՆԵԱՆ, *Ազգապատում, հտ. Ա., Պէյրութ, 1959, էջ 194։*

թյամբ հավանական է դառնում, որ Վարդանանց հիշատակն սկսել են տոնել արդեն 452 թվականից՝ հայազգի առաջին քրիստոնյա զորավար Վաչե Մամիկոնյանի եւ Վաչեյանների հետ միասին[3]։

Հայ Եկեղեցու կանոններով՝ սրբադասվում են հանուն կրոնի նահատակված աստվածաբանական երկերով, քարոզներով, իրագործած հրաշքներով, ճգնակեցությամբ աչքի ընկնող անձինք, որոնց՝ սրբերի շարքը դասելը կատարվում է երկու նախապայմանների հիման վրա՝ ա) ժողովրդական ճանաչում, որն արտահայտվում է ժողովրդի ինքնաբուխ մեծարանքով, բ) եկեղեցական ճանաչում։ Վարդանանց նահատակների պարագայում առկա են երկու իրողությունները միաժամանակ, քանզի նրանց սրբադասման հիմքում ընկած է «վասն հաւատոյ եւ վասն հայրենեայց» մոտեցումը[4]։ Վարդանանց վկաների հիշատակը մեր Եկեղեցին տոնում է փետրվար ամսին՝ Բուն բարեկենդանին նախորդող հինգշաբթի օրը[5]։

Ավարայրի ճակատամարտը Վարդանանց ապստամբության առանցքային հանգրվանն էր, սակայն պայքարը դրանով չավարտվեց։ Ավարայրից հետո՝ 23 տարի շարունակ, պարսիկները չդադարեցրին հայերի կոտորածը, որը խստացրեց «զանողորմ կոտորումն եւ գերումն, այրումն եւ քանդումն աշխարհիս Հայոց»[6]։ Նահանջող հայոց զորաջոկատները բնակչության հետ միասին ամրանում են Հայաստանի անառիկ վայրերում եւ շարունակում զինված պայքարը պարսիկների դեմ[7]։ Հետեւաբար «Վարդանանց նահատակներ» արտահայտությունն ունի ավելի լայն ընդգրկում՝ ներառելով նաեւ բոլոր նրանց, ովքեր կռվեցին, գերի տարվեցին եւ իրենց մահով միաբանվեցին Վարդանանց սուրբ ուխտին։ Այն, որ Ավարայրից հետո պարսիկների դեմ կռվում զոհվածները եւս համարվել են սուրբ նահատակներ, վկայում է Ստեփանոս Օրբելյանը։ Վայոց ձորում տեղի ունեցած հայ-պարսկական ճակատամարտերից մեկի մասին խոսելիս՝ զոհված հայ զինյալների կապակցությամբ պատմիչը նշում

[3] Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, Հ. ԲԱԴԱԼՅԱՆ, *Վարդանանց տոնի կանոնականացումը*, «Ավարայրի խորհուրդը» գիտաժողովի նյութեր, էջ 91–95. տե՛ս նաեւ Լ. ՍՐԿ. ՊԱՆՖՅՈՒՐՈՎ, Ա. ՍՐԿ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, *Հայոց զորավար սրբերը*, էջ 96–99. Մ. ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ, *Հայոց Եկեղեցու սուրբերն ու սրբոց տոները*, «Հայոց սրբերը եւ սրբավայրերը» գիտաժողովի նյութեր, Երեւան, 2001, էջ 14։

[4] Հ. ՀԱԿՈԲՅԱՆ, *Սրբադասման կարգը հայոց մեջ*, «Էջմիածին», 2011, Ե., էջ 53–59։

[5] «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 971։

[6] «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական», Մոսկուա, 1861, էջ 48։

[7] «Եղիշէի Պատմութիւն Վարդանանց», Թիֆլիս, 1913, էջ 159–164։

*է, որ կաթողիկոս Գյուտ Ա. Արահեզցին կարգադրում է սրբերի վրա մեծ վկայարան կառուցել եւ նրանց ոսկրերը հավաքել այնտեղ*[8]*։*

բ) «Վարդանանց սրբավայրեր» հասկացությունը։ *Հավաքական իմաստով այդ անունով են կոչվում բոլոր այն սրբավայրերը՝ բնական եւ ձեռակերտ հուշարձանները, որոնք կապված են Վարդանանց ապստամբության տարբեր դրվագների հետ՝ զորաշարժեր, բախումներ, լայնածավալ ճակատամարտեր, նահատակության եւ հուղարկավորության վայրեր։*

*Վերը նշեցինք, որ Սյունյաց տան պատմիչը տեղեկություններ է հաղորդում Վարդանանց ապստամբության ընթացքում ընկածների հիշատակին հուշարձաններ կառուցելու վերաբերյալ, ինչի մասին ուղիղ նշում է նաեւ Եղիշեն. «Բազում արձանք կանգնեալ էին յանուն նոցա, եւ անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա»*[9]*։*

*Ընդհանրապես Վարդանանքին վերաբերող մատենագրական տվյալները, որոնց հիմքը Եղիշեի եւ Ղազար Փարպեցու աշխատություններն են, բովանդակային առումով կարելի է բաժանել երեք մեծ հատվածի՝ ճակատամարտին նախորդող գործողություններ, Ավարայրի ճակատամարտ եւ հետավարայրյան իրադարձություններ։ Պատմիչները բավականին հանգամանալից ներկայացնում են Վարդանանց ապստամբության ողջ ընթացքը։ Սակայն մանրամասն նկարագրությունների շարքում, հատկապես Ավարայրին հաջորդող իրադարձությունների մասին խոսելիս, պատմագիրները ոչ մի խոսք չունեն ազատամարտի ղեկավար Վ. Մամիկոնյանի եւ նրա զինակիցների աճյունների հետագա ճակատագրի, հուղարկավորության մանրամասների, դրանց անցկացման վայրի վերաբերյալ։ Նման պայմաններում հատկապես արժեքավոր են Ստեփանոս Օրբելյանի հաղորդումները, որոնցում պատմիչը մանրամասն նկարագրում է Վայոց ձորում տեղի ունեցած ճակատամարտերի վայրերը, զոհերի թիվը, մարտիրոսներին թաղելուն առնչվող տեղեկություններ եւ այլն։*

գ) Վարդանանց սրբավայրերի ուսումնասիրության խնդիրները։ *Հարկ է ընդգծել, որ Վարդանանց ապստամբությունը բավականին մանրամասն քննության է ենթարկվել հատկապես պատմագիտության տեսանկյունից։ Տարբեր ուսումնասիրողներ դիտարկել են տվյալ ժամանակաշրջանի պատմական իրադարձությունները, ապստամբության նա-*

---

[8] *«Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական», էջ 51։*

[9] *«Եղիշէի Պատմութիւն Վարդանանց», էջ 263։*

*խաղրյալները, ընթացքը, հետեւանքները։ Դրանց համեմատ աննշան են Վարդանանց առնչվող սրբատեղիների հետազոտությունները, որոնք հիմնականում տեղ են գտել հայկական ճարտարապետությանը կամ սրբավայրերին նվիրված ընդհանրական աշխատություններում, որոնցում ընդամենը թվարկված են Վարդանանց հերոսներին նվիրված սրբավայրերը, կամ համառոտ շարադրված են դրանց նկարագրությունը, ճարտարապետական հորինվածքը։*

*Մյուս կարեւոր խնդիրը քննարկվող հուշարձանների մասին պատմական տեղեկությունների սակավությունն է։ Ինչպես վերը նշեցինք, շոշափվող թեմային վերաբերող աղբյուրագիտական նյութերի շարքում միայն Ստեփանոս Օրբելյանի մանրակրկիտ հաղորդումներն են, որ հստակ ցուցում են Վայոց ձորում նահատակված Վարդանանց ապստամբների սրբավայրերը։ Մյուս հուշարձանների պարագայում հետազոտողների ձեռքի տակ են սոսկ ավանդապատումները, որոնցում շատ հաճախ ակնհայտ է շփոթությունը Ավարայրի առաջնորդ Վարդան Մամիկոնյանի եւ Կարմիր Վարդանի հետ[10]։ Հիշյալ ապստամբությունները տեղի են ունեցել 120 տարվա տարբերությամբ, սակայն երկու դեպքում էլ նույնն են պատմական իրադրությունները եւ անձինք. պայքարը, որն ընթացել է հայերի եւ պարսիկների միջեւ, ղեկավարում են Վարդան անունով իշխանները՝ Մամիկոնյան տնից։*

*Հայ ազգագրությունն ու բանահյուսությունը հարուստ են Վարդանանց նվիրված ժողովրդական ավանդություններով, որոնք առատ, երբեմն նաեւ աղբյուրներում չվկայված նյութեր են պարունակում։ Դարերի ընթացքում բանավոր փոխանցվելով սերնդեսերունդ՝ զրույցների մեծ մասը գրի են առել եւ ուսումնասիրել մի շարք բանահավաքներ, ազգագրագետներ, գրողներ, որոնցից են Գ. Սրվանձտյանցը, Ղ. Ինճիճյանը, Ե. Լալայանը, Մ. Միրախորյանը, Մ. արք. Սմբատյանցը, Ն. Տեր-Ավետիքյանը, Ռաֆֆին, Մ. Աբեղյանը, Ս. Խանզադյանը, Ա. Ղանալանյանը եւ այլք[11]։ Ավարայրի եւ Վարդանանց մասին պահպանված բազմաթիվ պատումներից քննարկվող խնդրի համար առանձնանում են հերոսամարտի նահատակների հիշատակը հավերժացնող պատմաճարտարապետական հուշարձանների եւ այլ սրբատեղիների մասին պատմող նյութերը։ Դրան-*

---

[10] ԼԵՈ, *Վարդանանք, Երկերի ժողովածու, հտ. 2, Երեւան, 1967, էջ 50։*

[11] Գ. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ, *Վարդանանք հայոց ժողովրդական ավանդություններում, «Ավարայրի խորհուրդը» գիտաժողովի նյութեր, էջ 240–244։*

*ցում ներկայացվում են նաեւ այս կամ այն վայրը Վարդանանց հիշատակի հետ կապելու դրդապատճառները, պատմական դրվագի մանրամասները՝ բացահայտելով սրբավայրի անվանակոչության ժողովրդական ստուգաբանությունը։ Սակայն միայն հուշարձանների անվանումների եւ դրանց հետ կապվող ավանդազրույցների միջոցով դժվար է հստակեցնել տվյալ սրբավայրերը Վարդանանց ապստամբությանը վերագրելու գիտական հիմքը, հնարավոր առնչությունն ազատամարտի դրվագներին եւ նահատակներին։*

*Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հուշարձանները կառուցվել են պատմական տարբեր ժամանակներում, եւ ենթադրելի է, որ տարբեր ժամանակահատվածների համար արդիական համարվող ազատամարտի գաղափարը քարոզվել է հենց Վարդանանց օրինակով, որոնց հիշատակին կառուցվել են նորանոր աղոթատներ։ Վաղ միջնադարից սկսած՝ սպարապետ Վարդան Մամիկոնյանին եւ Վարդանանց նվիրված եկեղեցիներ ու վանքեր են կառուցվել Հայաստանի բազմաթիվ նահանգներում, հայկական գաղթավայրերում, հետագայում նաեւ՝ Սփյուռքում։ Ս. Վարդան անունով եկեղեցիներ կառուցվում են նաեւ մեր օրերում։*

*Խնդրի վերաբերյալ եղած հետազոտությունների ներկայիս մակարդակը եւ առկա նյութերը հուշում են, որ հուշարձանների մի զգալի մասը պարզապես կառուցվել է սրբացված Վարդանի եւ Վարդանանց անունով կամ առնչվում է ազատամարտի առաջնորդ Վարդանի՝ Ավարայրին նախորդող իրադարձություններին։ Եւ շոշափվող թեմայի վերաբերյալ ավելի խոր դատողություններ անելու համար անհրաժեշտ են հուշարձանների պեղումներ, հնագիտական լրացուցիչ սկզբնաղբյուրներ։*

## РЕЗЮМЕ

Как правило, «Мученики Вардананца» и «Святилища Вардананца» называются все святыни — памятники природы и ручной работы, связанные с различными эпизодами восстания Вардананц — движения войск, столкновения, крупномасштабные сражения, мученичество и места захоронений. Многочисленные святилища (начиная от дерева, которому поклоняются до монастырского комплекса) были сохранены в различных частях исторической Армении до наших дней, большинство из которых являются историко-архитектурными па-

Նկ. 1. Ավարայր։ Ծաղկող՝ Վարդան Բաղիշեցի, 1569 թ. (ՄՄ Հմր 1920)։

Նկ. 2. Ջովունիի Ս. Վարդան մատուռ դամբարանը։




Նկ. 3. Ընդհանուր հատակագիծ (ճարտ.՝ Վ. Խաչատրյան)։

мятниками под названием Св. Вардан, Вардананц. Количество таких памятников на территории Республики Армения и Арцаха составляет около десятка.

Данная статья является попыткой прояснить понятия «Мученики Вардананца» и «Святилища Вардананца» и изучить проблемы исследования.


## SUMMARY

Generally, all the shrines — natural and handmade monuments that are associated with various episodes of the uprising of Vardan and his companions (troop movements, clashes, large-scale battles, martyrdom and burial sites) are called “Vardanants’ martyrs” and “Vardanants’ sanctuaries”. Numerous sanctuaries (ranging from the worshiped tree to the monastic complex) have been preserved in various parts of historical Armenia to this day, most of which are historical and architectural monuments called St. Vardan, Vardanants. The number of such monuments in the territory of the Republic of Armenia and Artsakh is about a dozen.

The present article is an attempt to clarify the concepts of “Vardanants Martyrs” and “Vardanants Sanctuaries” and to examine the problems of research.